«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Չնավորող գնահատումը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին, գնահատման գործիքներ

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն, Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ՝ Տաթևիկ Ցոլակի Սևոյան

ՄԱՐԶ՝ ք.Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի Ջոն Կիրակոսյանի անվ. հ. 20 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 1

Ձևավորող գնահատումը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին 3

Եզրակացություն.....**Error! Bookmark not defined.**

Օգտագործված գրականության ցանկ 23

Ներածություն

Տեղեկատվական հասարակության պահանջներին համապատասխանող կրթության նոր մոդելի անցնելու համատեքստում գնահատման գործառույթը նոր իմաստ է ստանում, փոխվում են գնահատման նպատակները: Այժմ գնահատումը պետք է ուղղված լինի ոչ միայն թերությունների բացահայտմանը, այն պետք է դառնա կրթության որակի բարձրացման գործընթացի շարունակականությունն ապահովող մեխանիզմ, կառուցողական հետադարձ կապ ապահովի ուսումնական գործընթացի բոլոր առարկաների համար: Գնահատումը չպետք է պարզապես ամփոփի ձեռք բերվածը, այն պետք է դառնա ելակետ, որին հաջորդի զարգացման նոր փուլ՝ հասնելով կրթության որակի նոր մակարդակի: Ինչպես գիտենք՝ 2023 թվականից կիրառության մեջ է մտել հանրակրթության պետական նոր չափորոշիչը, որում այլ փոփոխություններից զատ առանձնահատուկ տեղ է հատկացված սովորողների գնահատման ձևերին, մասնավորապես՝ ձևավորող գնահատմանը: Ինչ խոսք, ներկայիս գործող չափարոշչում նույնպես ամրագրված է գնահատման այս տեսակը, բայց փորձը ցույց է տվել, որ ուսուցիչների մեծ մասը ոչ միայն չի կիրառում գնահատման այս ձևը, այլև չի տիրապետման այս գնահատման կիրառմանն ու արդյունավետության չափանիշներին: Այնինչ ձևավորող գնահատումը սովորողների ուսումնառության արդյունավետության ապահովման և բարձրացման լավագույն գործիք է:

Հետազոտության այս թեման համարում ենք խիստ արդիական և դեռևս ոչ այնքան յուրացված մանկավարժական համայնքի կողմից:

Ձևավորող գնահատումը տեղեկատվություն հավաքելու անընդհատ գործընթաց է ուսուցման ընթացիկ, ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, որն օգնում է ուսուցչին վերանայել դասընթացի պլանավորումը և իր կարծիքն է հայտնում սովորողի առաջադիմության մասին: Երբեմն ձևավորող գնահատումը կիրառվում է լայն իմաստով՝ ներառելով հարցաթերթիկներից և խորհրդատվություններից քաղված քանակական առումով չփոփոխվող տեղեկատվությունը:

Ձևավորող գնահատման ուժեղ կողմն այն է, որ նպաստում է ուսուցման բարելավմանը, իսկ թույլ կողմն այն է, որ կախված է պատասխան արձագանքի բնույթից:

Հետազոտական աշխատանքի **նպատակն** այն է, որ կարողանանք բացահայտել ձևավորող գնահատականի ազդեցությունը նյութի յուրացման բարելավման վրա:
Հետազոտական աշխատանքի **խնդիրներն են**.

- Նպաստել «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» դասերին աշակերտների կողմից խորը գիտելիքների ձեռքբերմանը
- Զարգացնել ճանաչողական գործունեությունը:

Ձևավորող գնահատումը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին

Գնահատման մասին խոսելիս պետք է հաշվի առնել հանրակրթության պետական նոր չափորոշչով նախասահմանված ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները. պետական չափորոշիչը ձևավորող հանրակրթական հիմնական ծրագրերի բաղադրիչներից մեկն էլ սովորողների գնահատման ձևերն են: Ինչպես գիտենք, հանրակրթական դպրոցներում ընթացիկ գնահատումն իրականացվում է 2 եղանակով՝ քանակական /միավորային/ և ձևավորող/ուսուցանող/:

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների համատեղ գործունեություն է, որի ընթացքում դիտարկվում են յուրաքանչյուր սովորողի ուսումնառության ընթացիկ արդյունքները, խնդիրներն ու դժվարությունները, այնուհետև, հենվելով սովորողի մտածողության տեսակի, ուսումնառության ոճի վրա, մշակվում են դրանք բարելավելու, հաղթահարելու ուղիներ:

Ձևավորող գնահատումը ուսուցչին թույլ է տալիս.

- հստակ ձևակերպել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատվելիք կրթական արդյունքը և կազմակերպել իրենց աշխատանքը դրան համապատասխան
- աշակերտին դարձնել ուսումնական և գնահատման գործունեության առարկա
- կարող է օգնել սովորել սխալներից

- կարող է օգնել հասկանալ, թե ինչն է կարևոր
- կարող է օգնել հասկանալ, թե ինչ են անում
- կարող է օգնել բացահայտել այն, ինչ նրանք չգիտեն
- կարող է օգնել բացահայտել այն, ինչ նրանք չեն կարող անել

Ձևավորող գնահատումը հիմնված է չափանիշների և հենանիշերի վրա: Չափանիշների վրա հիմնված գնահատման համակարգը պետք է հնարավորություն տա որոշելու, թե որքանով է հաջողությամբ յուրացվել որոշակի ուսումնական նյութ, որոշել, թե արդյոք ձևավորվել է որոշակի գործնական հմտություն, ստուգեք սովորողի ձեռք բերած մակարդակը, որը դրված է ուսումնական առաջադրանքում:

Ժամանակակից մանկավարժությունը ձևավորող գնահատումը համարում է սովորողներին տրամադրվող տեղեկատվական հետադարձ կապ, այն կիրառվում է ամբողջ դասընթացի ընթացքում՝ շարունակաբար ստուգելով՝ արդյո՞ք ուսումնառություն եղե՞լ է, թե՞ ոչ: Եթե այո, ապա ի՞նչը/ինչե՞րն են նպաստել դրան: Եթե ոչ, ինչո՞ւ և ինպե՞ս պետք է կազմակերպվի վերաուսուցումը:

Ինչպես նշվեց, նոր հպչ-ի գնահատման համակարգում առանձնահատուկ կարևորություն է տրվում ձևավորող գնհատմանը, հետևաբար մեծ թափով ուսումնասիրվում և առաջարկություններ են արվում այս բնագավառում: Այդ նպատակով ԿԶՆԱԿ- ը ուսումնասիրել և ուսուցչի սեղանին է ներկայացնում գնահատման հետևյալ բաղադրիչները և բազմատեսակ սանդղակներ տարատեսակ կարողություններ գնահատելու համար:

Ըստ ԿԶՆԱԿ-ի մասնագետների՝ ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում:

1. Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
2. Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:

3. Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
4. Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
5. Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում[1]:

Ստորև ներկայացնում ենք ԿԶՆԱԿ հիմնադրամի գնահատման բաժնի ստուգաթերթերից մի քանիսը:

Սովորողների հմտությունների և վերաբերմունքի գնահատման ստուգաթերթ (ՁԳ)

Ներկայացնում ենք ձևավորող գնահատում իրականացնող ուսուցչի դիտարկման թերթիկի օրինակ, որը կարելի է կիրառել տարբեր ուսումնական փուլերի համար և տարբեր նպատակներով: Այս տարբերակը մշակվել է սովորողների տարբեր հմտությունների և վերաբերմունքների ձևավորման ընթացքը դիտարկելու և, ի վերջո, գնահատելու համար: Ուսուցիչը ազատ է ընտրության մեջ, կարող է ընտրել չափանիշները՝ անհրաժեշտ դիտարկման ենթակա հմտություններն ու վերաբերմունքները՝ կախված ուսումնական փուլի նպատակներից[2]:

[1] https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html
[2] https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_1.html

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՈՒԳԱԹԵՐԹ

ՎԵՐԱԴԱՐԿԱՑԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐՅՈՒՆՔՆԵՐ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ									
	Սովորող 1	Սովորող 2	Սովորող 3	Սովորող 4	Սովորող 5	Սովորող 6	Սովորող 7	Սովորող 8	Սովորող 9	Սովորող 10
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ										
Առաջարկում է նոր մտքեր:	****									
Հարցերով ճշտում է հասկացածը:	*	*								
Պատրաստակամ կատարում է հանձնարարությունները:		***								
Բացատրում է մյուսներին:	***									
Եզրակացություններ է անում:	**									
Խրախուսում և ոգևորում է ընկերներին:		****								
Համագործակցում է բոլորի հետ:		**								
Տեղեկություններ է հավաքում:	***	***								
Պահանջկոտ է իր և ընկերների հանդեպ:	***									
Պատասխանատու է, ենթարկվում է ընդունված կանոնների:		*****								
Անաչառ է գնահատում իրեն:	***									
Անաչառ է գնահատում ընկերներին:	**									
Կարողանում է լսել:		***								
Արագ է կողմնորոշվում:	***									
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ/ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ										
Հաճույքով աշխատում է թե՛ տղաների, թե՛ աղջիկների հետ:	***	*****								
Ուշադիր է տարածքի մաքրությանը:	*	***								
Հոգատար և սրտացավ է ընկերների հանդեպ:		***								
Բարի է և արդարության սուր զգացողություն ունի:	***									
Պահպանում է բնությունն ու կենդանիներին:		****								
Հոգատար է և ճանաչում է իր համայնքը:		**								
Հարգալից է ուսուցիչների և մեծերի հանդեպ:		****								
Ունի խնայող վերաբերմունք:		***								

Տեքստի ընթերցանության կարողությունների ստուգման թերթիկ/ 2-րդ դասարան/[3]

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ
ՄԱՅՐԵՆԻ, 2-րդ դասարան

Վերջնարդյունքներ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ									
	Սովորող 1	Սովորող 2	Սովորող 3	Սովորող 4	Սովորող 5	Սովորող 6	Սովորող 7	Սովորող 8	Սովորող 9	Սովորող 10
Կարդում է հեգելով:										
Կարդում է վանկերով:										
Կարդում է բառերով:		**								
Ընթերցում է ծանոթ արձակ տեքստեր:										
Ընթերցում անծանոթ արձակ տեքստեր:	*									
Ընթերցում ծանոթ չափածո տեքստեր (հանելուկ, բանաստեղծություն):		*								
Ընթերցում անծանոթ չափածո տեքստեր (հանելուկ, բանաստեղծություն):										
Հասկանալով ընթերցում է արձակ և չափածո պարզ տեքստեր:										
Պատասխանում է կարդացածի վերաբերյալ հարցերին:										
Ձևակերպում է հարցեր ընթերցածի հիմնական բովանդակության վերաբերյալ:	**									
Ճիշտ և հասկանալով ընթերցում է ոչ գրական պարզ տեքստեր:										
Վերլուծում է ընթերցած տեքստի բովանդակությունը:										
Վերլուծում է ընթերցած տեքստի բովանդակությունը, արտահայտում է իր տեսակետը:										
Բարձրաձայն կարդում է բոպեում 30 բառից ավելի:										
Բարձրաձայն կարդում է բոպեում մինչև 30 բառ:										
Մտքում կարդում է 40 բառից ավելի:	***									
Մտքում կարդում է մինչև 40 բառ:	**									

Ընթերցանության արդյունավետությունը զարգացնելու, սովորողներին որևէ պահանջ ներկայացնելուց առաջ պետք է նրան բացատրել ընթերցելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ընթերցանությունը կրթության բովանդակային մաս դիտելուց առաջ այն պետք է կարևորել որպես մարդու մտագործունեության էական բաղադրիչ: Հետևաբար սովորողի հետ պետք է ազնիվ լինել և նրան նախապես ներկայացնել ընթերցող մարդու վերջնարդյունքները. ոչ միայն չափորոշչային պահանջներով, այլև նրա՝ որպես անձի ձևավորման ելակետ: Ընթերցումը ափոխարինելի միակ հմտությունն է, որը ազդում է մտածողության զարգացման վրա: Այն ոչ միայն հաճելի ժամանակ անցկացնելու, վերլուծական կարողություններ զարգացնելու միջոց է, այլև մարդու ամբողջական զարգացման նախապայման:

Ներկայիս հետազոտությունները ցույց են տալիս, որ ձեռքբերված գիտելիքները պարզապես երկարաժամկետ հիշողության մեջ պահվող հասկացությունների և ընթացակարգային հմտությունների հավաքածու չեն: Ավելի շուտ՝ գիտելիքը կառուցված

է անհատների կողմից իմաստալից ձևերով, որոնք աճում և փոխվում են ժամանակի ընթացքում:

2020 թվականի մարտի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ձևավորող գնահատման պաշտոնական ապացույցների տրամադրումը, ինչպիսիք են գրավոր հետադարձ կապը և վիկտորինաները ուսումնական ստորաբաժանումների ներսում կամ միջև, օգնեցին բարձրացնել ձևավորող գնահատումների արդյունավետությունը:

Ձևավորող գնահատման որոշ օրինակներ ներառում են.

- Պորտֆոլիոներ
- Խմբային նախագծեր
- Առաջընթացի հաշվետվություններ
- Դասարանային քննարկումներ
- Մուտքի և ելքի տոմսեր
- Կարճ, սովորական վիկտորինաներ
- Վիրտուալ դասարանի գործիքներ, ինչպիսիք են՝ Socrative-ը կամ Kahoot-ը:
- Գնահատման էական տարրերը

Ինչու՞ ենք գնահատում.

- արձանագրելու արդյունքները
- խթանելու ուսումնառությունը

Ի՞նչն ենք գնահատում.

- ուսումնառության արդյունքները
- ուսուցման և ուսումնառության գործընթացը

Ինչպե՞ս ենք գնահատում.

- բնութագրելով

Ե՞րբ ենք գնահատում.

- սկզբում (նախնական, հայտորոշիչ գնահատում)
- ընթացքում (ձևավորող գնահատում)

Հիմնական գործառույթները.

- ուսուցանող
- կարգավորող
- դաստիարակող
- զարգացնող

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ձևավորող գնահատումն օգնում է ուսուցիչներին հասկանալ աշակերտի ուսուցումը և նրանց տրամադրում տեղեկատվություն՝ համապատասխանաբար հարմարեցնելու իրենց ուսուցման ռազմավարությունները:

Դասի յուրաքանչյուր փուլում ուսուցիչը ժամանակ առ ժամանակ հարցերի, դիտարկումների միջոցով պետք է ստուգի, թե արդյոք սովորողները չեն շեղվել նախատեսված նպատակներին տանող ուղուց:

Մեր դասերին ձևավորող գնահատում կիրառելիս մենք օգտագործում եմ գնահատման այնպիսի ձևեր, ինչպիսիք են ինքնագնահատումը, փոխադարձ գնահատումը: Գնահատելով միմյանց՝ աշակերտները կարևորում են կատարված աշխատանքի դրական և բացասական կողմերը՝ դրանով իսկ ամրապնդելով ուսումնասիրված նյութը: Ինքնագնահատման ժամանակ աշակերտները հետևում և վերանայում են իրենց առաջընթացը: Սկզբնական փուլում գնահատման այս ձևերը բավականին բարդ են աշակերտների համար: Հաճախ աշակերտները օբյեկտիվորեն չեն գնահատում միմյանց և իրենց: Ուստի ինքնագնահատում և փոխադարձ գնահատում իրականացնելիս շատ կարևոր է ունենալ գնահատման չափանիշներ:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և աշակերտների միջև հետադարձ կապի շարունակական գործընթաց է: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր և գրավոր, պաշտոնական և ոչ պաշտոնական: Սա աշակերտի ձեռքբերումների մասին տեղեկատվության ստացման շարունակական գործընթաց է:

Աշակերտների ձեռքբերումները գնահատելու նոր մոտեցումների կիրառումը նպաստում է սովորողների մոտ ուսման մոտիվացիայի բարձրացմանը, կրթական անկախության հմտությունների ձևավորմանը և սեփական ուսման համար պատասխանատվությունը:

Այժմ ներկայացնենք ձևավորող գնահատման տեսակներ, որոնք կիրառել եմ «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ժամանակ:

Շաբաթական հաշվետվությունների թերթիկներ

Նպատակ. ծանոթանալ սովորողների կողմից ձևավորված հայեցակարգային դժվարություններին և սխալ հասկացություններին:

Բովանդակություն. շաբաթական հաշվետվությունները թերթիկներ են, որոնք սովորողները լրացնում են շաբաթը մեկ անգամ՝ պատասխանելով 3 հարցի.

- *Ի՞նչ սովորեցի այս շաբաթ:*
- *Ի՞նչ հարցեր են մնում ինձ համար անհասկանալի:*
- *Ի՞նչ հարցեր կտայի աշակերտներին, եթե ես ուսուցիչ լինեի, որպեսզի տեսնեմ, թե արդյոք նրանք հասկանում են նյութը:*

Այն կարելի է կիրառել որևէ գլուխ ամփոփելուց հետո:

Ֆրայերի մոդելը

Նպատակ. նպաստել գործնական հմտությունների զարգացմանը:

Բովանդակություն. սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի

անունը, ապա առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյու-նում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:



Հարցեր

Նպատակ. ամրապնդել թեման, զարգացնել մտածողությունը և ստեղծագործական միտքը:

Բովանդակություն. Դասի վերջում ուսուցիչը կարող է առաջադրել հետևյալ հարցերը պարզելու համար, թե որքանով են աշակերտները յուրացրել թեման:

- Ինչո՞վ X-ն ու Y-ը իրար նման:
- Ո՞րն է նյութի հիմնական գաղափարը:
- Որո՞նք են X-ի ուժեղ և թույլ կողմերը:
- Ինչպե՞ս է X-ը կապված Y-ի հետ:
- Համեմատե՛ք X-ն ու Y-ը՝ ըստ Z չափանիշի:
- Որո՞նք են խնդրի լուծման տարբերակները:
- Ի՞նչը չեք հասկացել:

Մետաիմացության թերթիկ

Նպատակ. ստրծնական հմտությունների զարգացում:

Բովանդակություն. այս թերթիկը լրացնելիս պետք է կատարել հետևյալ չորս քայլերը.

1. Ընթերցե՛ք հարցերը: Դրե՛ք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք: Դրե՛ք «՞» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք:
2. Գրե՛ք իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում:
3. Մեկ անգամ ևս ընթերցեք այն հարցերի պատասխանները, որոնց վրա դրել եք «՞» նշանը:
4. Ստուգե՛ք՝ արդյոք ճիշտ եք պատասխանել այն հարցերին, որոնց դիմաց աստղանիշ էիք դրել:

Երկու բան

Նպատակ. խթանել աշակերտների մոտիվացիան, զարգացնել մտածողությունը, նպաստել ստացած գիտելիքների յուրացմանը:

Բովանդակություն. թեմայի ամրապնդման ժամանակ աշակերտներին հանձնարարել լրացնել հետևյալ գծապատկերը:



Դասի պլան

Դասարան՝ 6-րդ

Առարկա՝ Մայրենի

Թեմա՝ Ու. Լիվինգսթոն Լարնեդ «Հոր զոչումը»/4 դասաժամ/Ամփոփում/

Դասի նպատակը.

Իմանա՝

- պատմվածքի բովանդակությունը և արտահայտած հիմնական գաղափարը
- համանունների լեզվաոճական առանձնահատկությունները, դրանց ոճական արժեքը
- նոր բառերի բացատրությունները

Կարողանա՝

- վերարտադրել պատմվածքի բովանդակությունը և մեկնաբանել արտահայտած հիմնական գաղափարը

- ընթերցանության ակտիվությունը նպատակաուղղել բարոյական արժեքների ձևավորմանը, բարության, մեծահոգության, հանդուրժողականության, արժանապատվության դրսևորմանը
- մեկնաբանել հոր և որդու փոխհարաբերությունները. դրդապատճառը
- ընկալել ընտանիքի դերն ու նշանակությունը անձի ձևավորման գործում
- պատմվածքից դուրս գրել համանունները և գործածել բանավոր և գրավոր խոսքում:

Ուսումնական մեթոդներ՝ «Հարցադարան» , «Երկանդամ», ԽԻԿ, ԳՈՒՍ:

Ուսումնական նյութեր՝ դասագիրք, նշագրիչներ, թուղթ, քարտեր

Քանի որ 6-րդ դասարանում մենք ուշադրություն ենք դարձնում խոսքի ճիշտ և գրագետ կառուցմանը, ազատ շարադրանք գրելու կարողություններին, մտքերի ճիշտ դասավորությանը, այդ ամենը հաշվի առնելով ակնկալում եմ վերջնարդյունք, որ աշակերտները պետք է կարողանան ճիշտ և տեղին օգտագործել բառերն ու բառակապակցությունները, կարողանան հիմնավորել արտահայտած մտքերն ու վերլուծել դրանք, շարադրել իրենց խոսքը՝ թույլ տալով ոճական հնարավորինս քիչ սխալներ, կարողանան գեղեցիկ և ազատ շարադրել իրենց արտահայտած մտքերն ու վերլուծել դրանք:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնենք ինքնագնահատմանը և փոխադարձ գնահատմանը, հնարավորություն ենք տալու աշակերտներին ազատ արտահայտվել, վերլուծել:

Խթանում. դասը սկսելու շատ հայտնի հնար է ԳՈՒՍ-ը: Դասի սկզբում գծում ենք Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրվում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո դիմում ենք աշակերտներին հետևյալ հարցով՝ ի՞նչ գիտեք այս թեմայի մասին: Ապա լրացվում է «գիտեմ» սյունակը:

Հաջորդիվ աշակերտներին հարցնում ենք՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում ենք «ուզում եմ իմանալ» սյունակը: Դասի վերջում լրացվում է «սովորեցի »սյունակը:



Իմաստի ընկալում. դասարանը բաժանվում է խմբերի և յուրաքանչյուր խումբ ստանում է պատմվածքի մեկ հատված, նշում կատարում, վերնագրում հատվածը, գտնում հատվածի բանալի բառը, գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը, բացատրում յուրաքանչյուր խմբին տրված բառերի հոմանիշները:

Աշակերտները խմբերում կատարում են տրված աշխատանքը, քննարկում և համագործակցային աշխատանքով խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է կատարված աշխատանքներից մեկը, ապա իրենց կազմած հարցադրումներով փոխադարձ գնահատում մյուս խմբին: Գնահատման այս ձևում երևում է հետադարձ կապի առկայությունը: Երեխաները փորձում են հայտնել իրենց սեփական կարծիքները, տեսակետները, օգնում/նաև՝«ստիպում»/ են խմբում թույլ մոտիվացիա ունեցող աշակերտին արտահայտելու իր կարծիքը: Այսպես ստուգում ենք, թե որքանով են աշակերտները սովորել և յուրացրել նյութը, չէ՞ որ ձևավորող գնահատակը սովորելու գնահատական է:

Աշխատանքի ավարտից հետո խմբերին հանձնարարվում է տրված հատվածից առանձնացնել որդու և հոր գործողությունները.

Որդի	Հայր
Քնած է:	Կոպտեց:

Կշռադատման փուլում քննարկելուց, վերլուծելուց և հարցադրումներին անդրադառնալուց հետո աշակերտները նշում են իրենց թերությունները՝ խոստանալով, որ հաջորդ դասին կշտկեն դրանք:

Դասն ամփոփելու համար երկանդամի մեթոդով ՝ հականիշ զույգերով, աշակերտներին առաջարկում եմ քննարկել, թե ծնողներն ինչ են սպասում իրենց երեխաներից.

Ի՞նչ անել	Ի՞նչ չանել
օգնել ծնողներին	չթափթփել

Անդրադարձ. դասի վերջում յուրաքանչյուր խմբի սեղանին դրվում է քարտ՝ հետևյալ հարցերով.«Հարցադարանը»

- Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր:
- Ի՞նչն էր դժվար:
- Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչու՞:

Եվ ուսումնասիրելով քարտերը՝ ուսուցիչը համապատասխան եզրահանգումներ է անում ԿԶՆԱԿի կողմից առաջարկվող ձևավորող գնահատման ստուգաթերթում:

Տանը հանձնարարվում է 5-6 նախադասությամբ ավարտել «Սիրելի՛ ծնողներ, վաղվանից...» միտքը:

Ձևավորող գնահատման տեսակներ կարող են հանդիսանալ հայտորոշիչ թեստեր, quizizz-ները: Ներկայացնենք 5-րդ դասարանում անցկացվող հայտորոշիչ թեստի մեկ օրինակ:

Նպատակը՝ Լեզվական գիտելիքի ստուգում,Լեզվական համակարգ

Առաջադրանքի ուղղվածությունը՝Ուղղագրություն,Հնչյունաբանություն

Առաջադրանքների քանակը՝3

Բարդությունը՝միջին

Վերջնարդյունքները՝

1. 1 . Բանավոր խոսքում ճիշտ կիրառի հայերենի հնչյունների արտաբերման և արտասանության կանոնները։
2. 2 . Տարբերի հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, մատնանշի դրանց արտասանության և գրության տարբերությունները, ճիշտ արտասանի և ճիշտ գրի արտասանությամբ և գրությամբ տարբերվող բառերը։

Առաջադրանքին հատկացվող ժամանակը՝ 15 րոպե

Հայտորոշիչ թեստ

1. Արտագրիր բաց թողնված տեղերում գրելով ե կամ է։

Գետ-զր, մանր-աբան, երբև-, առ-ջաթել չ-, որևից-, հն-աբան, լայն-կրան, ամենա-ժան, ան-անալ, վայր-ջք։

2. Կարմիրով ընդգծիր այն բառերը, որտեղ ե-ն ե է արտասանվում, կապույտով, որտեղ ե-ն է է արտասանվում.

զարկերակ, ինքնաեռ, աներկբայելի, համաեվրոպական, բազմերանգ, վրաերթ, զուգերգ, համերկրացի։

3. Մեկական բառ կազմիր եզր,երգ բառերով՝ արմատները դնելով բառի սկզբում և վերջում։

Հետադարձ կապ

Հայոց լեզու

Դասարանը՝ 7-րդ, Ածական անուն

Նպատակը՝ նպաստել խոսքում հատկանիշ ցույց տվող բառերի նպատակային և ճիշտ կիրառմանը, զարգացնել պատկերավոր խոսք:

Առաջադրանքի ուղղվածությունը՝ Ձևաբանություն, Խոսքի մասեր

Առաջադրանքի քանակը՝ 3

Բարդությունը՝ միջին

Վերջնարդյունքները՝

1. Ճանաչի ածականի հիմնական հատկանիշները:
2. Կիրառի խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստներով:
3. Կազմի պատկերավոր խոսք:

Առաջադրանքին հատկացվող ժամանակը՝ 20 րոպե

Նախնական հայտորոշման ժամանակ ուսուցիչը նախնական հայտորոշիչ թեստի միջոցով բացահայտում է սովորողների գիտելիքները ուսումնասիրած և նոր հաղորդվող ուսումնական նյութի վերաբերյալ:

Հայտորոշիչ թեստ

Ածական անուն, տեսակները

1. Յուրաքանչյուր գոյականի համար ընտրել համապատասխան ածական

Ա.....անտառ վեհանձն հզոր

Բ.....ուսուցիչ անաչառ

Գ.....հայրենիք դրական խիտ

Դ.....վերաբերմունք

Ե.....արարք

2.



3.Նկարագրել նկարը/սափորը,ծաղիկները,գույները/ և որոշել ածականների տեսակները.

Ուսուցման և ուսումնառության ողջ ընթացքում պարբերաբար անցկացվում է ընթացիկ հայտորոշում՝ հստակեցնելու ուսումնառության կարճ ժամանակահատվածում սովորողների առաջընթացը, ինչպես նաև դժվարությունները: Ընթացիկ հայտորոշումը անցկացվում է փոխադարձ գնահատմամբ:Յուրաքանչյուր աշակերտ թեստ է պատրաստում, տալիս ընկերոջը, այնուհետև ստուգում և գնահատում:

Յուրաքանչյուր գործիք կիրառելուց հետո բնականաբար տրվում է հետադարձ կապ, որը ՁԳ-ի կարևոր բաղադրիչներից է:

Եզրակացություն

Ինչպես տեսանք, ձևավորող գնահատման ճիշտ կիրառման դեպքում հնարավոր է հասնել սովորողի ուսումնառության և բազում կարողունակությունների զարգացմանը: Գիտնականների մեծ մասը անգամ այն կարծիքին են, որ միավորային գնահատումը ինչ-որ չափով խոչընդոտում է ուսումնառությանը, սովորողները հաճախ զբաղված են գնահատականներ հավաքելով, այլ ոչ թե սովորելով: «Այս մոտեցումը կարող է հանգեցնել մակերեսային ուսուցման: Ինչ վերաբերում է ամփոփիչ գնահատմանը, այն կենտրոնացնում է սովորողների ուշադրությունը գնահատումից գնահատում և հեռացնում է ուսումնական ծրագրի այն մասերից, որոնք չեն գնահատվում: Դասընթացի ընթացքում ավելի քիչ իմաստալից ուսուցում է տեղի ունենում, և քիչ

հնարավորություններ կան առաջադրանքներն իրականացնելու և հետադարձ կապ ստանալու համար»[3] (Jessop et al, 2014) :

Նման և այլ հիմքերով վերջերս ավելի է ընդգծվում **ձևավորող գնահատման կիրառման նշանակությունը:** Առաջնահերթությունների նժարը ավելի ձևավորող գնահատման օգտին է, հաշվի առնելով, որ այն կարող է **նվազեցնել սովորողների սթրեսը** և **վերակշռել ուսուցիչների ծանրաբեռնվածությունը** ուսուցման իմաստալից փորձառություններ ստեղծելու համար: Ավելին, այն **հնարավորություն է ընձեռում պրակտիկայի և** փորձերի, ինչպես նաև ավելի ցածր արդյունքների միջավայրում սովորելու եղանակների փորձարկումների համար: Այն նաև շատ ավելի մեծ հնարավորություններ է տալիս **ոչ պաշտոնական հետադարձ կապի համար,** որն ավելի քիչ օգտակար է ամփոփիչ գնահատման դեպքում:

Այսպիսով, ձևավորող գնահատման տեխնոլոգիայի կիրառումը դպրոցի «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին նպաստում է աշակերտների կրթական նվաճումների մակարդակի դրական դինամիկային: Ապահովվում է ուսումնական նյութի բովանդակության ավելի լավ յուրացում, ակտիվանում է կրթական մոտիվացիան, դրվում են ռեֆլեկտիվ հմտությունների և օբյեկտիվ ինքնագնահատականի ձևավորման հիմքերը: Ձևավորող գնահատման նորարարական մեթոդներն օգնում են պահպանել հետաքրքրությունը կրթական և ճանաչողական գործունեության և դրա արդյունքների նկատմամբ, զարգացնել երեխաների նախաձեռնությունն ու անկախությունը, գործունեության կոլեկտիվ և խմբային պլանավորման հմտությունները, երեխաների միջև կառուցողական հարաբերությունները:

Այսպիսով, ձևավորող գնահատումը տվյալներ գտնելու և մեկնաբանելու գործընթաց է, որը ուսուցիչները օգտագործում են՝ որոշելու, թե որքանով են

[3](Jessop et al, 2014) :

աշակերտներն արդեն առաջադիմել իրենց ուսման մեջ, ուր պետք է գնան և ինչպես լավագույնս դա անեն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սերոբ Խաչատրյան « Ուսուցման արդյունավետ հնարներ»

2. В. В. Арзыева «Формирующее оценивание как современный подход к оценке учебных достижений обучающихся»

3. Г. С. Михайловна « Система формирующего оценивания в начальной школе»

4. Д. Д. Оразбековна «Что такое формативное оценивание и каким образом оно улучшает преподавание и обучение?»